ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 20 » դեկտեմբերի 2018 թվականի N: 389-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 80-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի ապրիլի 11-ի ««Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը հաստատելու և տնօրենի վարձատրության չափը սահմանելու մասին» N 80-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված «Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է